ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ
1878-1945

Հայ բանաստեղծ, հրապարակախոս և հասարակական գործիչ **Վահան Գալուստի Թեքեյանը** ծնվել է 1878 թ. հունվարի 21-ին Կ. Պոլսում: Սովորել է ծննդավայրի Ներսեսյան, Պերպերյան, Կեդրոնական վարժարաններում: Աշխատել է Պոլսի ապահովագրական ընկերություններից մեկում, այնուհետև որպես առևտրական պաշտոնյա մեկնել է Անգլիա, ֆրանսիա, Գերմանիա, Եգիպտոս: 1905թ.Ալեքսանդրիայում հիմնադրել է *«Շիրակ»* հանդեսը: 1908թ. այն փոխադրել է Պոլիս և հրատարակել որպես շաբաթաթերթ: Թեքեյանը նաև *«Արև», «Ժողովուրդի ձայն»* և այլ պարբերականների խմբագիրն է եղել: Ժամանակի որոշ պարբերականներին աշխատակցելիս հանդես է եկել **Ասուպ**, **Սկայորդի**, **Համշիրակ Բ** և այլ ծածկանուններով: Հայ ժողովրդի մեծ ողբերգության օրերին Թեքեյանը զբաղվել է որբ մնացած երեխաների ճակատագրի հարցերով: Հետագայում ուսուցչական գործունեություն է ծավալել Կ. Պոլսի, Կիպրոսի և այլ վայրերի հայկական ազգային վարժարաններում:

Թեքեյանը գրական գործունեությամբ սկսել է զբաղվել 19-րդ դարի 90-ական թվականներին՝ դառնալով արևմտահայ դասական բանաստեղծության վերջին և սփյուռքահայ բանաստեղծության առաջին խոշոր դեմքը:

Բանաստեղծի առաջին ստեղծագործությունը՝ *«Կաղանդը Կեսարիո մեջ»,* 1894թ. տպագրվել է Պոլսի *«Հայրենիք»* թերթում, իսկ առաջին ժողովածուն՝ *«Հոգեր»*-ը՝ 1901թ. Փարիզում: 13 տարի հետո՝ 1914-ին, լույս է տեսնում բանաստեղծի 2-րդ ժողովածուն՝ *«Հրաշալի հարություն»* վերնագրով: Վարուժանի նման նա էլ է հայ ժողովրդի հերոսական անցյալն ու փառավոր օրերը հակադրում իր ժամանակի տխուր իրականությանը: 1918թ. տպագրված *«Կես գիշերեն մինչև արշալույս»* գրքում բանաստեղծը նկարագրում է Եղեռնի սարսափները, բնաջնջվող ժողովրդի ողբն ու տառապանքը: Այնուհետև հրատարակվել են Թեքեյանի *«Մեր»* (1933), *«Հայերգություն»* (1943) և *«Տաղարան»* (1944) ժողովածուները, որոնցում բանաստեղծը գրել է Սովետական Հայաստանի մասին, ոգևորվել նրա առաջադիմությամբ, ինչպես նաև փառաբանել Հայրենական մեծ պատերազմում հայորդիների հերոսական գործերն ու սխրանքը: Վահան Թեքեյանի բանաստեղծությունների մասին Վահագն Դավթյանն ասել է հետևյալը. *«Թեքեյանի լավագույն բանաստեղծությունները կարդալիս ինձ միշտ թվացել է, թե կանգնել եմ մեր ճարտարապետական որևէ նշանավոր կոթողի դեմ՝ նույն խորհրդավոր խոհունությունը, ձևերի նույն ներդաշնակությունը, նույն անզարդ ու զուսպ վեհությունը»:*

Թեքեյանը գրել է ոչ միայն չափածո, այլև արձակ գործեր։ Նրա՝ գաղութահայ կյանքի ու ազգային-ազատագրական շարժումների մասին պատմվածքները սիրվել ու գնահատվել են ընթերցողների կողմից։ Գրողը նաև ճանապարհորդական նոթերի, բազմաթեմա հոդվածների ու գրական արժեքավոր նամակների հեղինակ է։ Ունենալով բանաստեղծական վառ երևակայություն ու վերլուծական միտք՝ Թեքեյանն իր ստեղծագործություններում կյանքի գաղտնիքները ըմբռնելու փորձ է արել, միաժամանակ վեր է հանել մարդկային հասարակության մեջ տեղ գտած անարդարութիւններն ու նրանում առկա կեղծ հարաբերությունները։ Իր շատ երկերում գրողն անդրադարձել է հայ ժողովրդի պատմությանն ու ավանդություններին և հենց այդտեղից է քաղել իր զրույցների թեման ու ներկայացրել մշակումների տեսքով։ Թեքեյանը նաև թարգմանություններ է արել Շեքսպիրի, Բոդլերի, Վեռլենի և այլոց բանաստեղծություններից։

Թեքեյանը կյանքից հեռացել է 1945թ. ապրիլի 4-ին Կահիրեում և հուղարկավորվել տեղի հայկական գերեզմանատանը։

Սիրված գրողի գրական ու հասարակական գործունեությունն արժանացավ իր արդարացի գնահատականին. 1947 թ. Բեյրութում հիմնադրվեց Թեքեյան մշակութային միությունը, որն ունի հայկական մշակույթն ու արվեստը սփյուռքահայության մեջ տարածելու մեծ առաքելություն։

Առաջադրանքներ

1. Դիտի՛ր *«Առաջին այրեր»* վավերագրական ֆիլմը՝ նվիրված Վահան Թեքեյանին։ **Հղումը՝** https://www.youtube.com/watch?v=HlOtjuZTxkk&t=262s
2. Համացանցից գտի՛ր և ուսումնասիրի՛ր Վահան Թեքեյանի կյանքին և հասարակական գործունեությանը վերաբերող տեղեկություն։
3. Ներկայացրո՛ւ գրողի կենսագրական փաստերը, ստեղծի՛ր հեղինակի գրական դիմանկարը։
4. Մատնանշի՛ր Թեքեյանի դերը արևմտահայ և սփյուռքահայ գրականության զարգացման գործում։
5. Ըստ քեզ՝ որո՞նք են արևմտահայ և սփյուռքահայ գրականության ընդհանրություններն ու տարբերությունները։ Ներկայացրո՛ւ Վենի տրամագրի միջոցով։



6. Ընթերցի՛ր *«Դուն մերինն ես», «Գողթան երգիչներ», «Գեղոն Սոսյաց անտառին», «Հայ հոգիին», «Եկեղեցին հայկական», «Տաղ հայերեն լեզվին», «Ահավոր բան մը այնտեղ…», «Տարագրություն», «Ոսկեմարտ», «Աղվորները», «Քու հիշատակդ այս գիշեր…», «Ես սիրեցի»* և այլ բանաստեղծություններ քո ընտրությամբ։
7. Վերլուծի՛ր սիրային, հայրենասիրական և խոհական բանաստեղծությունները։
8. Մեկնաբանի՛ր հայրենիքի ցավը, նրա նկատմամբ տածած մեծ սերը, նրա ապագայի նկատմամբ ունեցած մեծ հավատը ներկայացնող հայերգական գործերը։

9. Կարդա՛ *«Տաղ հայերեն լեզվին»* բանաստեղծությունը, ընդգծի՛ր հայոց լեզվի նկատմամբ սերը ներկայացնող համեմատությունները։
10. Գտի՛ր լեզվի և այն կրող ժողովրդի ճակատագրի ընդհանրությունները ներկայացնող տողերը։

Տաղ հայերեն լեզվին

Քեզ, Հայ լեզո՛ւ, կը սիրեմ մրգաստանի մը նման…
Մեր Անցյալին թանձրախիտ ստվերներուն մեջ՝ կարծես
Մեյ-մեկ պտո՛ւղ՝ քու բոլոր բառերդ ինձի կ՚երևան,
Որոնց մեջեն կը քալեմ ու կը քաղե՛մ զանոնք ես…։

Մրգաստանի՛մը նման կը սիրեմ քեզ, Հայ լեզո՛ւ…
Մեր հայրենի պալատեն, պարտեզներեն մնացորդ՝
Դալարագեղ դուն պուրա՛կ, որ դիմացար դարերու,
Եվ կը մընաս միշտ առույգ, հին ավիշովդ կենսահորդ…։
Ծառերուդ մեջ հովանուտ կ՚երթամ խինդով մ՚անսահման,
Արմատներուդ, ճյուղերուդ վրա նայելով հիացիկ,
Զարմանալով, թե ինչպե՛ս դուն մնացիր՝ երբ սաստիկ
Քամին քու շուրջդ փըչեց եւ տապալեց ամեն բան…։

Մեյ — մէկ պտուղ գույնզգույն՝ ամբողջ բառե՛րդ ահա՛,
Հյութե՛ղ բառերդ՝ զոր որքա՛ն հասունցուցին արևներ,
Բառե՛րդ, որոնք այս պահուս շրթա՛նցս վրա եմ բռներ,
Բառերդ որ քիմքիս կ՚օծեն և կ՚սփոփեն սիրտս հիմա…։

11. Կարդա՛ *«Քու հիշատակդ այս գիշեր…»* բանաստեղծությունը, ցո՛ւյց տուր քնարական հերոսի կերպարի զարգացումն ու փոփոխությունը։
12. Ցո՛ւյց տուր բանաստեղծի վարպետությունը սիրո վերհուշը ընթերցողի համար հույզի վերածելու հարցում։

Քու հիշատակդ այս գիշեր…

Քու հիշատակդ, այս գիշեր, զիս լալու չափ կը հուզե.
Կարծես մեկնած էր սրտես և գաղտնաբար այս գիշեր
Ետ կը դառնա, իր հին տեղն ու հին զգվանքը կ՚ուզե,
Կը սեղմվի գրկիս մեջ, կը բարձրանա կուրծքս ի վեր…։

Քու պատկերդդ աչքիս մեջ և քու ձայնդդ՝ ականջիս,
Կը թրթռան այս գիշեր, երակներուս մեջ կարծես
Քաղցրահոտ շունչդ է լեցված, որ կ՚զգլխե, կ՚օրրե զիս,
Մինչ երեսես ալ կ՚անցնին կարծես մատներդդ անտես։

Ետ կդառնան մի առ մի մեր հին ժամերն անկորուստ,
Կարավանին հետ աստեղց անոնք կ՚ուգա՛ն վերստին,

Հոգիս փարա՛խն է բացվող ընդդեմ իր քա՛ղցը հոտին։

Հիշատակովդ, այս գիշեր, կ՛զգամ անչա՛փ զիս հարուստ,
Այնչա՛փ բարի, երջանիկ… որ գթությամբ մը անհուն՝
Կը մտածեմ զայն բաժնել երկրի բոլոր խեղճերուն…։

13. Մեկնաբանի՛ր ստեղծագործության կառուցվածքը։ Ըստ կառուցվածքի՝ բանաստեղծության ո՞ր տեսակն է։ Նշի՛ր արևելահայ այն բանաստեղծի անունը, որը զարգացրել է բանաստեղծական այդ ձևը։
14. Ընթերցի՛ր Թեքեյանի *«Եկեղեցին Հայկական»* բանաստեղծությունը։

Եկեղեցին Հայկական

Եկեղեցին Հայկական, ծննդավայրն է հոգվույս,
Ինչպես քարայր մ՚ընդարձակ, պարզ ու խորհուրդ , մութ ու լույս,
Իր գավիթովն հյուրընկալ, իր լայն բեմով, ու հեռուն,
Կանգնած իր լուռ խորհանով, որ կարծես նավ մ՚ է ծրփուն. . . :

Եկեղեցին Հայկական, ես աչքրս գոց կը տեսնեմ,
Ու կը շնչեմ, կը լսեմ՝ իր Հիսուսով մանկադեմ,
Իր սեղանեն մբխացող, գուլա - գուլա խունկերով,
Եվ իր պատերը ցնցող աղոթքներով ալեխառով. . . :

Եկեղեցին Հայկական բարձրը բե՛րդն է հավատքին
Իմ պապերուս՝ որ հողեն զայն քար առ քար հանեցին
Ու երկինքեն իջուցին զայն ցող առ ցող, ամպ առ ամպ
Ու թաղվեցա՛ն անոր մեջ հանդարտությամբ, հեզությամբ. . . :

Եկեղեցին Հայկական մեծ վարագույր մ՚ է բանված,
Որուն ետև, սրկիհին մէջ կ՚իջնե ի՛նքը՝ Աստված,
Որուն առջև՝ գլխահակ կու գա իմ ազգրս ամբողջ
Հաղորդվիլ Անցյալին հաց ու գինվով կենսառողջ։

Եկեղեցին Հայկական՝ ծովուն դիմաց ալեկոծ
Նավահանգիստ մ՚ է խաղաղ, ցուրտ գիշերին՝ հո՛ւր ու բոց,
Ու տոթակեզ ցերեկին անտառ մըն է ստվերոտ՝
Ուր շուշաններ կը ծաղկին Շարականի գետին մոտ։

Եկեղեցին Հայկական մեն մի քարին տակ գետնի
Դեպի երկինք բարձրացող գաղտնի ճամբա մը ունի.
Եկեղեցին Հայկական Հայ Հոգիին և Մարմնույն
Զբրահանդերձն է փայլուն՝ մինչ իր խաչերն են դաշույն

Եվ զանգակներն են բոմբյուն, և երգն է մի՛շտ հաղթություն. . .

15. Մեկնաբանի՛ր բանաստեղծությունը, ցո՛ւյց տուր այն տողերը, որտեղ բանաստեղծը շեշտում է եկեղեցու՝ որպես տարագիր հայերին օտարության մեջ միավորող միակ օջախի դերը։
16. Դո՛ւրս գրիր եկեղեցին բնութագրող պատկերները։



17. Ներկայացրո՛ւ բանաստեղծի լեզուն, ոճը, պատկերավորման միջոցները՝ բերելով համապատասխան օրինակներ։